

ՎԵՆԵՏԱՀԱՅ

(Տես յէջ 333)

Ս. 80 երկու գէորգաց ժամանակակից երրորդ մ'ալ կայ շատ անգամ յիշուած, և ազգակցաց մէջ նշանաւոր՝ հարլատութեամբ, կամ երկրատէր ըլլալով. իր վաստակի աղրիւրն ալ եղած է միջնորդութիւնն, սահսկր ըլլալն, պյլ և լեզուազիւսութիւնն, որով շատ հեղ թարգման եղած է թուրքաց. բայց թերեւա յաջողութեանն զիսաւոր պատճառն եղած է իր հայրենիքն կամ հայրն, որ կոչուի թէնդոր կեսարացի, ⁽⁴⁾ և մի անգամ սխալմամբ նօտարի զրշին կամ ականջին խսիդոր գրուած: Ասոր ի վեհետիկ գալն յայտնի չէ, որով և գէորգաց այս քաղքիս թէ ի կեսարիա ծնանին, (որ աեւի հասանական է). մահուան թուականն յայտնի է ժիշտ գրուն սկիզբները, 96 տարուան նշանակուած, որ իր որդւոց ծննդեան թուականաց համեմատելով շափազանց կ'երեւի. վասն զի բատ մահուան թուականին՝ ինքն ծնած կ'ըլլայ 1512ին, իսկ իր պայազատ որդին (**Ստեփան**) կը ծնանի իր 75 կամ 76 տարուան եղած ատեն: Եւ որովհետեւ հարկ եղաւ յիշել սերունդը կամ ազգաբանութիւնը, ներկայացնենք նախ ինչ որ յայտնի է մեզ ի մկրտազրոց, ի պատկազոց և ի նօտարաց, նա եւ ի կոտակէն գէորգայ. ար մահուանէն տարի մ'առաջ 7 զաւակ ունէր կենդանի, երկուքն մանչ և հինգ աղջիկ.

Եղիսաբեթ կամ իզապել, մկրտաւծ ի 20 հոկտ. 1577
 Պաւա Գոմինիկա, մկ. 3 մարտի, 1580.
 Միմն Յակովի, մկ. 31 հոկտ. 1584
 Զեշիլիս Լոյցինա, մկ. 29 հոկտ. 1584
 Ստեփան Պետրոս, մկ. 14 ապրիլ. 1587

Թէսդոր կեսարացի

6ունչի + 1628 յլլենուն	Գէորգ—կին Ռուբինա դ. Արմենի + 1608
Ստեփան Պետրոս կ. 1587 Միմն Յակու	
Եղիսաբեթ ձ. 1577 Պաւա Դամինա + 1607 Ա. Յուլիս Պետրոս ձ. 1580 + նախ քան 1595	Գէորգ Պավլինի ձ. 1581 + 1634
1600. Ա. Ստեփան ի. Պոլսկի	Զեշիլիս Լոյցինա ձ. 1584 Ա. Յուլ. Ֆելիքսին Ա. Վ.
Ռուբինա Գէորգ 1589	

Գիարա , որոյ ծննդեան թուականը չեմ գտած

Ա.Ա. աղջիկ մ'ալ նաեւ անուամբ անծանօթ :

Ասոնց մայրն , կինն գէորգայ՝ էր մեզի արդէն ծանօթ Հայոց տնապահին Սիմոնի (տ. երես 148) դուստրը , Ռուսինա անուամբ (Rubina) :

Գէորգայ ծանօթ յիշատակը իբր 40 տարիներու միջոց են (1574—1608) . ընակութեան թաղոն եղած է ի Ա. Յովիան , ի տունն Հայոց . ասով կը պարզուի անոր պահապանի (Սիմոնի) հետ խնամենալն նախ քան զ' 1577 : Առաջին յիշատակն է՝ Ochatan թերեւս Յովսաթան անուամբ ազգայնոյ մի գործակալ ըլլալն (3 հոկտ. 1571) , անոր 289 դուկատ առնելիրը պահանջելու Տոլֆինոյ կոչուած զրամանեղանէն (banco) . այս բանիս վկայ եղած է մեր նախածանօթ Գէորգն Յովիաննիսեան : — Երեք տարի վերջը (1574 , մարտ 3) կարկասեցի Սիմոնի հետ որ նոյնպէս ի Հայոց տան ընակէր , կը վկայէ Շատրար անուամբ Զուղայեցոյ համար , որ ամէտ ամիս առաջ եկած էր , և այսպէս կոչուի , այսպէս ալ գրուած է անունն ծովային մաքսատան մէջ . ուրիշ Շատրալթի (Հալէպիի) որդի մ'ալ (Աղեքսանդր) այս վկայից վկայ կ'ըլլայ : Իրրե թարգման թուրք (թերեւս և պարմիկ լեզուի) կը յիշուի (1575 մարտի 48) ուրիշ Զուղայեցոյ (Բասսայ. ո. Մարգարէի) ինորոյ մէջ : Երկու տարի վերջը (1577 , մայիս 14) Պալլի Ահմէտ անուամբ Ամասիացի թուրքի մի փոխ կուսայ 120 դուկատ , և գրաւական կ'առնու անկէ երեք ծրար երկու տեսակ մետաքսի , որ զեռ ի մաքսատան էին , իր քով պահելու պայմանաւ : Ուրիշ Ահմէտ մ'ալ (Պէկպազարցի հաճի Հիսէինի որդի) 1589 տարւոյն սկիզբը (2 յանուարի) մահուան վլունգի մէջ ըլլալով , նոտարի հետ կը կանչէր զԳէորգ և զՄարկոս ո . Յակովլեայ , թարգմանելու իր ըսելիքը , որ էր իր ստացուածոց , դրամոց և լաթեղինաց ժառանգ կարգել իր հօրեղորորդին (Եպուտիք) . իրեք հայրենակից Պէկպազարցի թուրքը ալ վկայ կ'ըլլան կտակին :

Շատ տարիներ այս թուականէն եաբը՝ իր գաւակաց ծննդեան յիշատակէն զատ՝ ուրիշ բան չեմ գտած Գէորգայ նկատմամբ . այլ կ'երեւի թէ այն միջոցին (իբր 13 տարի) բաւական յաջողած ըլլայ իր միջնորդութեան արւեստով . վասն զի անկէ ետեւ գետիներ կամ արտեր գնելու զբաղած կը տեսնուի . և նախ 1592ին վերջերը (գեկտ. 27) վենետիկայ սահմանէն շատ հեռու Պերկամայ գաւառին մէջ , Պրեմապանա կամ Պրեմաց վիճակին Պիանոյ կամ Պիանպիվալլէ գեղին , (որ հիմայ կոչուի S. Giovanni Bianco Գարիմալի մասին մէջ) 12 արտաքափ (campro) մշակուած գետին կը գնէ 600 գուկատի՝ Ալգայինոյ Ալվասոր անուամբ մէկէ մի , և նորէն անոր վարձու կու տայ գնածը , պայմանաւ վեց ամսէ վեց ամիս շահն կամ վարձքը առնուզ 50/0 , այսինքն 60 դուկատ տարեկան : Բայց գրեթէ տարի մի վերջը (44 հոկտ. 1593) առուտաւը կը փոխէ . գետինը կը՝ դարձնէ իր հին տիրոջը , ետ կ'առնու տուած 600 դուկատը : Յայտ է որ անոր տեղ աւելի մօտ և շահաբեր երկիր մի գնել կ'ուզէր , միանգամայն շատ աւելի

ընդարձակ, և արդէն տեսեր քններ որոշեր էր. վասն զի քիչ օր վերջը (26 հոկտ.) կը սկսի այս նար առուտուրը՝ բաւն վեհենեկոյ զաւակին Նոռլէ վիճակին Սալցանոյ զիւղի վելլազիկա կոչուած մասին մէջ (¹): Այս գետինն 38 արտաշափ էր, կէսն Մարգոյ Տոլէ անուամբ մէկուն, որ դաշնազնեցաւ վաճառել ամէն մէկ արտը 129 դուկատի, միւս կէսն ալ Լուկրեցիա կորպեզի (Lucrezia Cortesi) անուամբ ազնուական աիկնոջ մ'էր, որ գրեթէ նոյն գնով տուաւ իր մասը. բովանդակ զինն կամ ծախքն եղաւ 5160 դուկատի, որոյ համար նախ 4000 դուկատ տուաւ, մնացածն ալ քիչ քիչ յետոյ վճարեց (²): Այս գետոյն մօն նոյն Սալցանոյ զիւղի մաս համարուած թողինեկոյ տեղոյ մէջ ալ 1¹/₂ կամ երկու արտաշափ տեղ գնեց, և բովանդակն 40 արտավար հաշուեցաւ. զոր թէպէտ իրը 40 աարի վերջը (1602, յուլ. 8) գէորդ 2000 դուկատի վաճառեց Ալլիզէ Կրիմանեայ աղնուականի՝ ազգականի նոյնացեղ զըրսի ժամանակին, որոյ Մարիամ աղնուական օժտէն առնուեցաւ զինն և դրաք դրուեցաւ ի դրամանոյն (zecca), և առաջուան գնածին նման՝ նորէն ինքն (Գէորգ) վարձեց իր ծախածը 120 դուկատի վարձքով, սակայն յետոյ դարձեալ իր և իր որդուց ձեռքը մնաց երկիրն, որ և այնպէս յիշուի 40 և աւելի տարի ետքն ալ. նա և անոր վրայ արտավար մի աւելցընելն ալ, զոր յամի 1597 (յանու. 24) գնեց նոյն վելլազիկայի մէջ իր մէկ փեսային ձեռքով, 134 դուկատի, Պրեցցադոյ (Prezzato) Միկրտի անուանեալ տեղացիէ մի:

Մինչեւ այս ժամանակներ Գէորդ միջնօրդութեան գործն ալ չէր թողած, ընկերակցութեամբ ուրիշ նշանաւոր միջնօրդի և վաճառականի մի, որ էր Մարկոս Մուրատ որդի թակորայ. հիմայ արդէն տարիին առած ըլլալով՝ ուղղեց ետ քաշուիլ ի գործոց: Երկու ընկերասկիցք և շահակիցքն ներկայացան նօտարի (ի 28 մայիսի, 1596), յայտնեցին և վասերացուցին իրենց բաժնուին, ամեն հաշիւ մաքրած, և իրարմէ բնաւ առնելիք տալիք շունենալով, որպէս զի իրենց ժառանգք ալ չկարենան իրենցմէ բան մի պահանջել: Ամէկ վերջը Գէորդ 12 տարի ալ ապրած է հանգըստեամբ, իր գնած 40 արտավար երկիրն բերքը կամ վարձքը վայլելով, իր զաւակաց և թուանց խնամքով և սիրով: 1607ին (օգոստ. 8) կը կանչէ իր տունը (որ այն ասեն Ս. Փելլիս թաղին մէջ էր), նօտարը (Տրեվիզան, Zuan Andrea կամ Giovan Trevisan) և զիմէ կու տայ համառօտ կոտակը. թէ և մեռ մտօք ալ մարմեռով ալ առողջ եմ կ'ըսէ, բայց ծերացեր, անոր համար կ'ուզեմ գործերս կարպաւորեալ թողով. և յետ յանձնելոյ զիողին առ Աստուած և առ Ս. Աստուածածին, առանց մի առ մի յիշելոյ ստացուածքը՝ զամենքն ալ կը թուզու հաւասար իր երկու որդուց, Առեփանի և Սիմոնի. իսկ իր հինգ դըս-

1. Villa Villatica sotto la piove di Salzano, podesteria di Noale, territorio Trevisano.

2. Ինչպէս կը նշանակուի յաջորդ տարին (1594, յանուարի 27ին), 500 դուկատ վճարելն առ Լուկրեցիայ, մարտի 10ին 200 դուկատ, և այլն:

տերաց՝ բան մ'ալ չեմ թողուր կ'ըսէ, որովհետեւ զանոնք կարգեցի և ամենուն ալ տուի ինչ որ պատշաճ համարեցայ. իսկ բարերարութեան տեղեաց համար՝ ինչ որ պատշաճ համարին որդիկու տան: — Դաստերաց տուածէն կը յիշուի միայն Զապելի կամ Եղիսաբեթի տուածն, որ էր 800 դուկատ, զոր անոր այրիկն (Յուլիան Պինուսոյ Ֆիորենտին կամ Ֆիորենցացի) ընդեղինաց և ալեր ամբարապետաց քոյլ շահու գրեր էր. հիմայ (թերեւ կակածելով հօրը մահուանէն ետեւ վտանգուելու) Զապել աղաջց զնայրը, և սայանձն առա ներկայանալ նօտարի, իր կտակն ընկելէն ամիս մի վերջը (25 մարտ, 1607), և այդ գումարը (800 գուկատ) զարձընել իր Սալցանոյ զիւդի երկիրներէն 40 արտօվլարի վրայ, տարին 48 դուկատ շահ տալով Զապելի. և այս բանիս հոգը յանձնեց իր Սիմոն որդույն: Շատ տարիներ վերջը (1635, մարտ 24), միւս որդին Ստեփան այս գումարը կամ օժիտը՝ ամբո զնդարձուց իր քրոջը՝ Զապելին, որ այն տաեն այրի էր մահցեր, և երկուքն ալ մէկմէկու անդորրապիր տուին: Դաստերը օժիտը կամ ժառանգութիւնը ապահովցընելն՝ Գէորգայ վերջին յիշուած գործն է. անոր վրայ տարի մի և ամիս մի ալ ապեր է, և ի 20 ապրիլի 1608ին, վախճաներ է, ըստ վերոյգրածին՝ 9 6 տարուան, շերտով և վէրուով մի հիւանդացեալ, Ա. Փելիքս եկեղեցւոյ թաղին մէջ, ուր և թաղուած է հաւանօրէն: (4)

Գէորգայ զատերաց առջինեկին՝ Զապելի ամուսինն էր Յուլիան Պինուսոյ, Զեշիլիայի՝ Յովհան Ֆիլիլիպին, Գիարայ՝ Մ'եմոյի մականուանեալ կ. Պոլսեցի, իսկ միւս երկուց, անանուանն և Պաւլայ Դամինիկայ, ամուսնաց՝ մին կոչուի Յովհ-Անոն Ալեաննի (Aleanni Zuan Antonio), միւսն Ստեփան կածարոյ (Gazaro) գրուած, որ թերեւս Ղազար Հայ ըլլայ. բայց ասոնց որն որուն ընկեր էր՝ չեմ զտած:

Ցէշուեցա ի սկզբան Գէորգի մէկ եղբայրն՝ Յովհակի, սա իրմէ քսան տարի վերջը (1627) վախճաներ է յլլնգոնա. յաջորդ տարին (1628, յան. 47) Գէորգ Գորիլիս անսէրն և շորս ազգային վաճառականք՝ նօտարի առջեւ երդմանք կը վկայեն, որ Յովհեփայ գործակալն և խաչեղբայրն (compare) Գալուստ Ռոդորլու (Ventura Ugerlu գրուած), ըսեր է թէ Յովհակի պատիքած է որ իր ստացուածքը Անգոնայի Հայոց տան վերակացու Բարդոյի քովն է (Bardo Cester, թերեւս Կոտովլագործ), պէտք է առնուլ և տալ Զաքարիայի որդի Մարկոս սարկաւագին, որ իր ազգականն է, և իր թաղման ծակնքը հոգացեր էր:

Տ. Նոյն իր կտակն ըրած տարին, (1607) և իրմէ առաջ (փերք. 17) իր գործակիցն ալ Մարկոս Մուրատ սաննէր, ըրած է իր կտակը, բայց կինդ տարի վերջը վախճաներ է 90 տարուան (1613, մարտ 3), ստացուածքը թողլով իր կառարինք կնոջ, և անոր մահուանէն ետեւ: իր որդույն Բակովայ. իր կենօքը բարերարութեան տեղեաց բաւական բան տուած ըլլալով՝ նոր բան չի թողուր. միայն կը պատուիրէ որ Ն. իրասուանդ անոււամբ Դոմինիկեանէ մի 70 դուկատ առնելիք ունի, զայն առնուն և իր հոգւոյն համար պատարագի բաշխեն:

Գալովլ հիմայ Գէորգայ որւոց, Սիմոնի յիշատակ չեմ գոսած հօրը մա-
հուանէն վերջը . իսկ Ստեփան շատ հեղ կը յիշուի, և զրեթէ միշա իր
հօրմէն ժառանգած երկիրներուն համար, ամբողջ 40 արտաշափին, ուսկից
կ'երեւի որ Սիմոն շուտ վախճանած ըլլայ, 1620էն առաջ. վասն զի այս
թուականէս կը սկսի յիշուիլ Ստեփանի զիտինները ծախելն կամ վարձելն.
նախ (սեպտեմբ. 26ին) իր հօրը՝ զատ տեղ մի Վերին Ռուլիկոյ (կամ Sabrosi)
գնած արտաշափ գետինը կը ծախէ 150 դրւատի (Աղեքսանդր Պոծայ լե-
նենեցի վաճառականի մի). երկրորդ տարին կը դաշնապրի (15 յանու.
1621), նոյն Աղեքսանդրի ծախել մէկուկէս արտաշափ գետին ալ ի Վիլա-
տիկայ, արտաշափն 130 դրւատի, բայց Աղեքսանդր բաւական ապահովուած
շամարելով՝ դաշինքը կ'աւրեն նօտարի առջեւ։

Ստեփանի Չեշիրիա Լուչինա քրոյն կ'ապրէր Էրկանը հետ Վենետիկոյ
Բորգոյ կրուարոյ վճակին Տիզանայ (Tisanay) գիւղի Ս. Մի-
չիել del Quarto) բառած կողմը, ուր տուն և տեղ ունէր, բայց այրիկն
(Ֆիլիպպին Յովկան) ծախեր էր զանոնց տեղւոյն քահանային, և զինն ա-
ւանդեր էր Տիզանայի գիւանատան. 1626ին սկիզբը (21 յանու.) Ստեփան
իր բրոջ խնդրելով՝ գործակալ մի դրաւ (Մարտին Ալպերոյինի) որ այն գու-
մարէն 188 գուկատ հանէ, որպէս զի Չեշիրիա նորէն իր տունը և տեղը
զնէ. և անշուշտ այնպէս եղած է: Վերը յիշեցինք Ստեփանի միւս քրոջ
(Զապելի) ալ ըրած տիրութիւնը կամ օգնութիւնը. այն առթին՝ 800 գու-
կատը ճարելու համար 10 արտաշափ գետին ծախեր էր Նիկոլ. Պալուոյ
(Nicolo q. Pompeo Baldo) (21 մարտի, 1635). այս պայմանաւ որ ինքն
իր ծախսածին վարձուոր ըլլայ 5⁴ առ հարիւր շան վճարելով, և եթէ հինգ
տարուան մէջ վճարէ՝ նորէն երկիրն իրեն գառնայ. և այնպէս ալ կ'ընէ ու
կը տիրանայ իր տեղայն: — Նախընթաց տաքին (1634) վախճանած էր
Ստեփանի կինն Պալա Պալինի, որուն հետ պսակուած էր 1618ին. առ
օժիտ բերած էր 2000 գուկատ, 500 գուկատի ալ հագուստ, և այլն, որ
շափաւոր հարրասութեան նշան է, այն աստենուան ստակի արժէքին համե-
մատ. և որովհետեւ անկուսկ մեռաւ, ըստ օրինաց Վենետիկոյ՝ ընչից երրորդ
մասն կ'ինքնար Էրկանը, մասցեալն՝ որդոցը. հիմայ Ստեփան երկու զաւակ
ունէր, մանչ մի և աղջիկ մի. զա՞ որ իր մօր անուամբ Ռուրինա կոյեր
էր, արդէն կարսեր և օրինաւոր օժիտը առեւր էր. ուստի իր կնկան 2500
օժիտէն առաւ իրեն ընկած երրորդ մասն 833 գուկատը. իսկ իր (հօրն ա-
նուամբ) Գէորգ որդոցն մասց երկու բաժինն, այսինքն 1666 գուկատ. այս
գումարին տեղ հայրն տուաւ Գէորգայ 100 գուկատի ինչք, մասցեալ մեծ
գումարին համար ալ Սալցանոյ գեղին երկուն տուն մի և 15 արտաշափ,
ո՛ր կոտրն որ ուզէ. այս բան նօտարի առջեւ Տիրամօր եկեղեցւոյն (S.
Maria Mater Domini) աւագերիցուն տանը մէջ գրուեցաւ, և Գէորգ իր
հօրը անգորրագիր առուա, (49 մայիս, 1635): — Նոյն օր նոյն տան մէջ
Գէորգ իրբեւ արդէն շափահաս խնդրեց որ ինքնապուկ ըլլայ՝ հայրական իշ-

խանութիւնէն ազատուած։ ըսել է թէ 20 տարեկանի մօտ էր. հաւանեցաւ հայրն, և նօտարական զրով հաստատել տուաւ. « և ի նշան ազատազրութեան, կ'ըսէ նօտարն, իր Աստուծմէ խնդրած հայրական օրհնութիւնը տուաւ որդւոյն. և երկուքն ալ փոփոխակի խոստացան և պարտաւորեցան հաստատ պահել այս դաշինքը » :

Գէորգ Գէորգեան արդեօք իր մօր օժտէն ժառանգած գետինը զատկեց ու առանձին բանեցուց, եթէ նորէն հօրը գարձուց՝ անոր զինը առնյովլ. — յետին հաւանական կ'երեւի. որովհետեւ իր ազատազրութեանէն չորս տարի վերջը (1639, փեր. 22) վիլլատիկայի մէջ ունեցած ամբողջ 40 արտաշափր վարձու տուաւ Յուլ. Պորտոլուզզո (Giuliano Portoluzzo) Սալցանացի մէկու մի, իրեք տարուան համար. այսպիսի դաշամբ, որ սա տուակի տեղ տարօւէ տարի տայ իրեն 55 քոռ (staro) լաւ, մաքուր, շոր ցորեն, 45 տական գիճի զուտ (vin collado mastelli 45 a mosto), տեսակ տեսակ փայտեղէն կէս կէս չափ, քոռ մի կորեակ, քոռ մի կարմիր աւելի հունտ, և իրեւ ընծայ՝ Ամենայն Սրբոց տօնին (նոյեմբ. 1) զոյգ մի սագ, Եննդեան տօնին՝ Յ զոյգ որձատ, խոզ մի 100 լտրանոց. բարեկենդանին՝ Յ զոյգ հաւ, զատկին՝ 200 հաւկիթ. Ս. Պետրոսի տօնին ալ Յ զոյգ վասեակ. և զայս ամենն ալ վարձուորն պարտական էր բերելու ինչուան ի Մեսարէ, որ Վենետիկոյ ցամաքին մօտիկ և զիսաւոր նաւակայ աւան մ'է. ինչպէս որ կ'ընէր և կը վճարէր առջի վարձուորն ալ: Ընկեղինաց և գինոց շափերն ալ Տիեզիս քաղաքին շափերովն են, որոյ գաւառին սահմանուած էին վարձեալ արտերն :

Այս յիշատակէս վերջը շգմնելով ուրիշ քան Գէորգայ որդի և Գէորգայ հայր Ստեփանոսին, հարկ է բարով վայլէ ըսենք իր վարձուորին ընծայելիքը, և թողումը որ ժամանակն յայտնէ իր վախճանն և այն զետիններուն ժառանգները: — Որդույն Գէորգայ ալ մասնաւոր յիշատակ մի ծանօթ չէ. բայց եթէ 1650ին (օգոստ. 19) իրեւ 50 ազգային վաճառականաց հետ (որոց ամենուն անուանն ալ զուած են) միաբանելովլ կը խնդրէ, որ այն ասեն ի Վենետիկ գտուող նշանաւոր (և շաս ալ նշանաւոր, իրաւ կամ սուս) թուվմաս վարդապետն (որ երբեմն եպիսկոպոս կ'ըսուի, երբեմն պատրիարք) իրենց պաշտպան մի ընտրէ զիրենք խարողներէն. յետոյ ումանք զնոյն ինքն կ'ընտրեն պաշտպան իրենց պարտականաց հետ գտասատանին համար: — Թուփ թէ նոյն ինքն Գէորգ է (Giorgio Punes) զրուած, իրը Փանոս, Ստեփան որ 45 տարի վերջ ալ (1665, հոկտ. 29) Յօիս չափ ազգայնոց հետ երեսփոխան կը կարգեն իրենցմէ մէկը՝ Սարուխան ո. Յակովայ, որ Քառասնից գտասարանին մէջ բոլորէ կիսրոսի մաքսառուաց գէմ, զիրենք նեղենուն համար: — Ա՛լ աւելի շատ տարիներէ վերջը (1689, յունիս 9) վերջին անգամ (իմ ծանօթութեամբ) կ'երեւի Գէորգ իրեւ կնքահայր Յովհաննէս Զէլսի կոչուած ազգայնոյ մի որդույն մկրտութեան, զոր Գալուստ կամ իտալորէն Վենեդուրա կ'անուանեն. այն ասեն Գէորգ կը բնակէր ի Ս. Յովհան

թաղի և թերեւս ի նոյն իսկ ի Հայոց տան։ — Ասով կը վերջանայ այս կեսարացի թէպորեան տոհմի Գէորգեանց՝ մեր գիտցած 120 տարուան յիշատակն՝ ի Վենետիկ։

Եւ որովհեսեւ զասոսք յիշելնուա զիխաւոր առիթն էր իրենց երկրատէր ըլլալն, համառօտիս յիշենք հոս քանի մի ուրիշ ժամանակակից ազգային երկրատէր ալ, Վենետիկոց ցամաքին այլեւայլ կողմէր. որոց մէկն է մեր Հայոց Տնպահից կարգին յիշեալ Ղազար Պարսկահայե. որ յամի 1614 (մայիս 6) իրեն գործակալ կարգէ Պատուայի սահմանին մէջ եղած անուանի Պրալիա (Praglia) Բենեդիկտեանց վանքի մեծաւորը, որպէս զի Ֆրիոնի գեղին մէջ իր ունեցած 16 արտաշափ գետնին վարձքը առնու ի վարձուութէն։ — Մէկ այն է Մէկդոն ո. Յովհաննեու, որ 1617ին (սեպտ. 18) կոսակը զրել տալով, կը յիշէ Տրեվիզի Ս. Վլաս (S. Biagio) գեղին մէջ ունեցած գետինը, զոր կը թողու իր Լուկրեցիայ կաջ, մինչեւ որ գայ կարագետ՝ իր եզրօր կամ քրոջ որդին. իսկ ինքն քանի մի տարի վերջը մեռած է (Ճ գերբ. 1625)։ — Ժէ զարու կիսուն Յովհանի Գրիգորի որդի մէկ մի՛ նախ արտաշափ գետին մի գնած է ի Մէկրոյ Բորբուրուարոյ վեճակին մէջ, որ վերը յիշուեցաւ, 1649ին (հոկտ. 28). յետոյ (1654, յուլիս 1) արտաշափ մի և քատորդ մ'ալ վերոյիշեալ Մետորէի մօտ տեղ մի. վերջը ուրիշ գետին ալ, և տասն տարի ետեւ կը ծախէ 10 արտաշափ, այլնայլ գնով։ — Ասոնցմէ վերջը ծանօթ է և Յովհանի ո. Յովհաննեու, որու զարանչն և անոր եղբայրն օժտի համար խոստանալով 1000 զուկատ, կիսուն տեղ կու տան (1673, նոյ. 26) ընկեղէն, կիսուն տեղ ալ 6 արտաշափ Պատուայի (Campo S. Piero) (Ս. Պետրոսի զաշա կամ արտ) վիճակին Պարապարիկոյ կոչուած մասին մէջ. ինքն ալ ընդունելութեան գիր տառած է (1675, գեկտ. 22)։ Ասոնցմէ եւաբը նորազցն ժամանակաց մէջ երբ բազմացան Հայք ի Վենետիկ և անուուրեցան, յայտ է որ կարողութիւն ունեցաղք՝ ցամաք երկրի վրայ ալ տուն և գետին ստացեր են։

Շարունակելի

